

342.8

4-62,

300

1214-90

342-9



Պրոֆեսարներ բոլոր երկրների՝ միացե՛ք!

Բ. Գնունեանց (Բ. Ռազին)

Ինչպիսի ընտրողական իրաւունք
է հարկաւոր քանւոր դա-
սակարգին

342-
9-70

Պրոֆ. Մ. ՍԱՀԱԿԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էրեբոն. տպարան Ա. Մ. ԹԱՌՈՒՄՆԱՆԻ Բարոնո. № 2
1917

342.8 | *Ulmus pumilus*
4-66 | *Platanus sp.*
Ulmus pumilus *Platanus*
Ulmus pumilus *Platanus*
15/1/80

[illegible]

1214-92

342.8

4-62

Հովհաննէս ԶԱՐԳՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ԲԻԾՈՒԹՅՈՒՆ
7/31. 1922
* Ս. Շ. Շ. *
ՍՈՑԻԱԼ. ԴՆՈՒՄԻՆԱՆ
ՀԱՅԿԱՆ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԻԿԱՆ
ԲՍ. Լ. Դ. Ս. Ե. ԿՈՄՍՈՒՆԻՍՏԻԿԱՆ
(Բ. ՌԱԴԻՆ)

(1878—1911)

430

Մայիսի 14-ին լրացաւ Բաղդադի մահաւան վեցամեակը: Բաղդադի քաղաքական-հասարակական գործունէութեան մանրամասնութիւնները որքան հետաքրքիր են, նոյնքան և ուսանելի: Խօսել նրա եռանդուն և բազմապիսի գործունէութեան մասին, մանրամասնաբար անկարող ենք: Փամանակը, մոմհոտի հրատապ դրութիւնը և յեղափոխական շրջանը մեր առաջ խոշոր պարտականութիւններ են դրել, իսկ կենսազրական, քաղաքա-հասարակական գնահատումներ տալը աւելի սառն ու հանգիստ պայմաններ են պահանջում: Կասեմք միայն, որ Բաղդադը Ռուսաստանի յեղափոխութեան ականաւոր գործիչներէն էր և նրա փայլուն ներկայացուցիչներէն մէկը:

Նա ով գործել է Բաղդադի հետ, անշուշտ կը համաձայնի մեզ հետ, թէ ասե՛նք, որ Բաղդադնը մարմնացած ռզեկորու թիւն էր և իր ռզեկորութեամբ ուրիշներին վարակող: Բաղդադն Պնոնեսան քաղաքական անպարէզ է գալիս 900—ական թուականների սկզբին. նրա գործունէութեան նախնական շրջանը, Բագուն էր: Հայ իրականութիւնից ելած, հայկական մթնոլորտում գործելով չբաւականանալով, նա իբր ուսանող Ռուսական մայրաքաղաք է տեղափոխում իր գործունէութիւնը, դառնալով Պետրոգրադի պրոլիտարեատի սիրելին: 1905 թւի հոկտեմբերեան լեզափոխութեան օրերին ընտրում է Պետրոգրատի բանշորական պատգամաւորների խոհրդի անդամ: Այնուհետև

ձերբակալում է, աքսորում Սիբիր, փախչում տյանդից և տեղափոխում Բագու, ուր Սէրգէյ Ալեքսանդրովիչ Մարգարեան անունով ծառայում էր նախարարինարե-րական խորհրդում: Յարական ֆարասներին հեռատես աչքերից չէր կարող վրիպել Բաղդանը: Բաղուում ծառայելիս, ձերբակալում է և 1911 թւի մայիսի 14-ին բան-դում մեղում—բժաւոր տիֆից: Բացի քաղաքական գործունէութիւնից, Բաղդանը ունեցել է և զրական աշխատանքներ:

Այդ աշխատութիւններից մէկը ներկայ բրոշիւրն է, ուր պոպուլիար և մատչելի լեզուով հիւսած է ընտրա-կան իրաւունքի սկզբունքն ու հիմնաւորումը պրօլետարեատի շահերն ի նկարի առւած: Թող այս փոքրիկ զրա-կան լուծման առհաւատչեայ հանդիսանայ սիրելի ընկե-րոջ յիշատակի յաւերժացման:

Ս. Տ.

Ա.

«Մինչև այսօր գոյութիւն ունեցող հասարակութիւն-ների պատմութիւնը—դասակարգային կռիւ պատմու-թիւն է» այսպէս է սկսում Մարքսի և Էնգելսի նշանա-ւոր կոմունիստական մանիֆեստը: Ներկայ հասարակու-թիւնների մէջ այդ կռիւը ոչ միայն չի թաւանում, այլ օրէցօր աւելի է ուժեղանում, մեծանում:

Բուրժուազիան և պրօլետարիատը՝ ահա այն երկու կռուող կողմերը, որոնց շահերի շուրջն է համախմբւած ամբողջ տնտեսական և քաղաքական կեանքը, և որոնց կռիւն է կազմում ժամանակից պատմութիւնը: Բուրժուա-զիան ձգտում է որքան կարելի է յարմար պայմաններ ստեղծելու որ աւելի հարստանայ, միշտ շահագործէ բան-ւորներին և իր ուղածին պէս կարգաւորութիւններանէ ժո-ղովրդի անունից: Իսկ պրօլետարիատը քաղաքացիների իսկական հաւասարութիւն ստեղծելու համար ինքն է աշխատում իշխանութիւնը իր ձեռն առնել, որպէսզի տնչացնէ շահագործութիւնը, վերացնէ հասարակութիւն-ների միջից դասակարգերի բաժանումը: Նւ կռուող կողմե-րից ոչ ոք չի զիջի, իսկ յաղթողը ուժեղը կը լինի: Ահեղ կռիւ մէջ չափազանց շատ բան է կախած այն միջոց-ներից, որոնցով օգտւում են կռուող կողմերը: Որքան կռուողը լաւ է զինաւորւած, այնքան շուտով նա կարող է յաղթել: Դասակարգերի կռիւ մէջ ամենաուժեղ միջոցնե-րից մէկն է քաղաքական իշխանութիւնը՝ այսինքն պե-տութեան բոլոր գործերը վճռելու իշխանութիւնը: Ով

մեծ ազդեցութիւն ունի պետական գործերի վրայ նա կարող է իր դասակարգի համար աւելի լաւ պայմաններ ստեղծել, նա կարող է այնպիսի օրէնքներ հրատարակել որ նպաստէին այդ դասակարգի առաջխաղացութեան օգնէին յաշիւութեան թշնամիներին: Սրանով պէտք է բացատրել որ ամեն անգամ, երբ պրոլետարիատը ձգտում է ուժեղացնել իր մասնակցութիւնը պետական կեանքում, ունեւոր դասակարգերը ամեն կերպ աշխատում են հեռու պահել նրան երկրի բախդը տնօրինելուց:

Բոլոր այն երկրներում, որտեղ բանւորները լաւ են կազմակերպւած, որտեղ կարող են միաբան և միահամուռ դուրս գալ բուրժուազիայի դէմ և առաջագրել իրենց արդարացի պահանջները, նրանց աջողում է պետութեան մէջ աչքի ընկնող ոյժի հասնել և ունեւոր դասակարգերը չեն կարողանում դիմադրել նրանց յաղթական ընթացքին:

Կարեւոր իրաւունքներից մէկը որ ապահովում է բանւոր դասակարգի մասնակցութիւնը երկրի քաղաքական կեանքում՝ ընտրողական իրաւունքն է, այսինքն իրենց պատգամաւորիքին Ներկայացուցչական ժողով (պարլամենտ) ուղարկելու իրաւունքը,—պետական բոլոր հարցերը վճռելու համար: Այն երկրներում, որտեղ ժողովուրդը ազատութիւն է ձեռք բերել և անկախ վճռում է իր բախտը ժողովրդի ներկայացուցիչները իրենք են օրէնքներ հրատարակում, պետութեան ծախսերը բաժանում, հետևում, որ պաշտօնեաները ճշտութեամբ, կէտ առ կէտ կատարէին ժողովրդի կամքը և այլն:

Հասկանալի է որ բանւոր դասակարգը միայն այն ժամանակ կարող է պետութեան գործերի վրայ ազդեցութիւն ունենալ, երբ ձեռք կը բերի իր պատգամաւորին Ներկայացուցչական ժողով ուղարկելու իրաւունքը:

Մենք ասում ենք «ձեռք կը բերի», որովհետեւ ոչ մի տեղ իշխանութիւն ունեցողները յօժարութեամբ չեն տալ նրան այդ իրաւունքը: Եւ ինչ չա՛հ ունեն նրանք գրանում: Զէ որ բանւոր դասակարգը ազգաբնակչութեան մեծամասնութիւնն է կազմում, եթէ նա դիտակցաբար ընտրութիւններով Ներկայացուցչական ժողովը և երկրի իշխանութիւնը իր ձեռքը կը վերցնի, պարզ է, որ սրանից ունեւոր դասակարգերը լաւ բան չեն կարող սպասել: Հաշուածները շատ լաւ գիտեն որ ընտրողական իրաւունքը բանւորի ձեռքում մի հօր գործիք է, այդ պատճառով էլ արդարութեամբ թէ անարդարութեամբ աշխատում են խելի նրանից այդ իրաւունքը: Թէ նոքա ինչ միջոցների են դիմում մօնք յետոյ կը խօսենք, իսկ այժմ մի անգամ էլ կրկնենք, որ Ներկայացուցչական ժողովի պատգամաւորների ընտրելու իրաւունքը պետական կեանքին մասնակցելու իրաւունքն է:

Ով պատգամաւորներ է ընտրում, նա էլ մասնակցում է օրէնքների հրատարակման, ով իւր ներկայացուցիչն է ուղարկում, նա հսկում է մինիստրների, պաշտօնեաների և պետական այլ ծառայողների վրայ, ով որ ընտրութիւնների ժամանակ ձայն տալու իրաւունք ունի, նրա համաձայնութիւնը անհրաժեշտ է տուրքերի նշանակման, ժախսերի բաժանման ժամանակ և այլն և այլն: Ընտրողական իրաւունքը ամբողջ աղյւստնակութեան համար, այսպէս է եւրոպայի բոլոր սոցիալիստական կուսակցութիւնների մարտական կոչը:

Երկրի քաղաքական կեանքում մասնակցելու իրաւունքը պէտք է պատկանէ ամբողջ ժողովրդին: Օրէնքները բոլորի համար են գրւում, ուրեմն պէտք է գրւին

երկրի բոլոր բնակիչների կողմից առանց սեռի, ազգութեան և կրօնի խտրութեան: Ոչ ոք պարտաւոր չէ հպատակել այն օրէնքներին, որոնց իրենց կայացուցիչը Ներկայացուցչական ժողովում չի տւել իր համաձայնութիւնը և ոչ ոք իրաւունք չունի ստիպել մէկին վճարել մի տուրք, որի սահմանմանը չեն մասնակցել նրա ներկայացուցիչները: Ամբողջ ժողովուրդը պէտք է մասնակից լինի երկրի օրէնսդրութեան, այսպէս է ռամկավարութեան իսկական կողմնակիցների՝ բանւոր դասակարգի պահանջը: Որպէսզի այդ մասնակցութիւնը ապահովւած լինի պէտք է Ներկայացուցչական ժողովի ընտրութիւններին մասնակցէ երկրի ամբողջ ազգաբնակչութիւնը:

Ընտրողական իրաւունքը պէտք է լինի ընդհանուր, որ նշանակում է ամեն մի չափահաս քաղաքացի ընտրութիւնների ժամանակ ձայնի իրաւունք ունի: Ոչ ոք չպէտք է զրկւած լինի այս իրաւունքից, բացի մի դէպքից միայն երբ հոգեկան հիւանդութեան պատճառով մէկը անկարող է գիտակցաբար օգտուել այդ իրաւունքով:

Ոչ ոք չպէտք է զրկուի իրաւունքից, ոչ հասակը ոչ սեռը, ոչ հարստութիւնը, սրանցից և ոչ մէկը չպէտք է պատճառ դառնան քաղաքացուն իրեն պատկանող իրաւունքից զրկելուն, չպէտք է արգելք հանդիսանան մասնակցելու երկրի քաղաքական կեանքին: Ով այս պահանջին կողմնակից չէ, նա, անկասկած ժողովրդի թշնամին է և կամենում է կրճատել ժողովրդի իրաւունքները, խանգարել նրան իր լուխտը ազատ որոշելու: Այս հարցի վերաբերմամբ դեմօկրատիան ոչ մի զիջում չի անի: Ընտրութիւնների մէջ շահագործւած է պրոլետարիատը (ինչպէս սակաւահոգ ու հողագործիկ գէւղացիութիւնը Ծ. Թ.) որովհետեւ մէկ ուր, նա ողջաբնակչութեան խոշոր մեծամասնութիւնն է կազմում և մէկ էլ, որ այդ դասակարգը իբրեւ սեփականագործիկ դասակարգ ամենից չափ է տուժում

զանազան սահմանափակումներից:

Տեսնենք ինչպիսի սահմանափակումներ են ստեղծել և ստեղծում են հարուստ դասակարգերը ընդհանուր ձայնատուութեան դէմ:

Նախ և առաջ նրանք զրկում են ազգաբնակչութեան կէս մասը ըտրողական իրաւունքից, որովհետեւ այդ կէսը, իդական սեռին է պատկանում: Այդ սահմանափակումը ոչ մի հիմնաւոր պատճառ չունի: Բուրժուազիան մինչև օրս աշխատում է պաշտպանել կանանց անհաւասար իրաւական դրութիւնը, աշխատում է ամեն կերպ կնոջը հպատակել սովորաւոր՝ ընտանիքի գլխին, և դրանով ապահովել ժամանակից հասարակութեան հիմքը՝ բուրժուական ընտանիքը, որտեղ կինը միայն խոհանոցի տանտիկին է և ոչ մի յարաբերութիւն չունի հասարակական կեանքի հետ:

Բոլորովին ուրիշ բան ենք տեսնում մենք պրոլետարիատի մօտ. այստեղ կինը հաւասար իրաւունք ունի տղամարդու հետ նրա ամենօրեայ աշխատանքի մէջ: Նա փաստօրէն անկախ է: Անկախ կերպով աշխատում է գործարաններում, մասնակցում է երջանիկ ապագայի համար մղած բանւորների կռիւն և բոլոր գործերում միանգամայն ազատ է տղամարդուց: Բանւորներն երբեք չեն ցանկանայ զրկել իրենց ընկեր կանանց երկրի քաղաքական կեանքին մասնակցելու իրաւունքից, բանի որ դրանով կապիտալիզմի դէմ կռւող բանւոր դասակարգի թիւը երկու անգամ կփոքրացնէին: Նւ ինչպէս կարելի է կնոջը զրկել այդ իրաւունքից քանի որ նա բանւորի ընտանիքում նրա հետ հաւասար աշխատում է, տանջւում և զրկանքների ենթարկւում: Բոլոր երկրների բանւորները պահանջում են կանանց համար ընտրողական իրաւունք և մի քանի տեղերում նրանց արդէն աշուղել է ձեռք բերել, (Նոր Զե-

լանդիա, Հիւսիսային Ամերիկայի մի քանի նահանգներ և վերջերս նաև Ազատ Ռուսաստան: (Մ. Թ.)

Ընդհանուր ընտրողական իրաւանքի փոխարէն ունեւոր դասակարգերը առաջադրում են միշտ ցենզային ընտրողական իրաւունք:

Յենզ կոչուում է ընտրութիւններին մասնակցելու յատուկ իրաւունք և հիմնուում է որոշ չափով կալւածքներ ունենալու վրայ—կալւածային ցենզ, կամ ստացած կրթութեան աստիճանի վրայ—կրթական ցենզ: Ընդունել ցենզային ընտրութիւնը նշանակում է զրկել միլիոնաւոր ժողովրդին—բանւորութեան և աղքատ գիւղացիութեան—բաղաբական կեանքին մասնակցելու իրաւունքից, նշանակում է պետութեան իշխանութիւնը յանձնել ունեւոր դասակարգերի ձեռքը: Յենզ նշանակելիս բուրժուազիոսն այսպէս է դատուում:

«Նա ունեւոր մարդ եմ, ես ունեւում տուն, գործարաններ, դաշտավայրեր, ես շահագրգռւած եմ կարգ ու կանոնի, խաղաղութեան, իմ ունեցած հարստութիւնը պահպանելուն, ուստի Ներկայացուցչական ժողովում պէտք է պաշտպանեմ գոյութիւն ունեցող կարգերը, չպէտք է ընդունեմ այնպիսի օրէնքներ, որոնք վտանգեն եւ կարողութիւնը, պէտք է խելացի լինեմ և խնայող: Բանւորները կամ միւս աղքատները ոչինչ չունին և ոչինչ էլ չեն կորցնի, նրանք չեն ուզում ժամանակակից կարգերը և պետութեան կազմը պահպանել, ուստի հէնց որ նրանց Օրէնսդէր ժողով թողնեմ, նրանք կսկսեն բոլոր կարգերը խորտակել, ալիպիսի օրէնքներ կընդունեն, որոնք երկրի խաղաղ վիճակը կխորտակեն և երկիրը կընդգայտի խաղաղացիներ: Այլ, այդ վայրենիներին ոչ մի դէպքում Ներկայացուցչական ժողով չպէտք է թողնել»: Ինչպիսիք, որոնք իրենց տեսակէտից արդար են. որոնք

պէտք է ինչ գնով էլ լինի պահպանել ներկայ կապիտալիստական կարգերը որպէսզի հեշտութեամբ շահագործեն, հարստանան և հրամայեն ամենքին. իսկ բանւորների համար, ընդհակառակը, հարկաւոր է որքան կարելի է շուտով ոչնչացնել այդ կարգերը, ստեղծելու մի նոր կազմ, որը համապատասխանէր իրենց շահերին, որպէսզի կապիտալիզմի վրասականների վրայ ստեղծեն նոր սոցիալական կարգեր: Իրանցից ով է արդարը, այդ ցոյց կտայ կռիւը, միայն յաղթւածը յամենայն դէպս ոչ պրոլետարիատը կլինի:

Ձանազան երկրներում ունեւոր դասակարգերը ընտրութիւններին մասնակցելու համար զանազան ցենզ են ստեղծել:

Նրբեմն ձայն է արւում նրանց, ով որոշ գումարից պակաս տուրք չի վճարում, երբեմն նրանց, ով անշարժ սեփականութիւն տուն, հող, գործարաններ կամ մի որոշ արժողութեան կալւածք ունի, բայց չնորհւ ընդհանուր ընտրողական իրաւունքի համար մղած կռիւ, կալւածային ցենզը մի քանի երկրներում ոչնչացւած է, ինչպէս օրինակ՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում և այլն: Բայց ցենզը դեռ պահպանւում է Գերմանական մի քանի մանր պետութիւնների մէջ, մասամբ Անգլիայում և բաւական ուժեղէ Աւստրիայում:

Այս ամեն սահմանափակումները խիստ սղգում են մանաւանդ բանւոր ազգաբնակչութեան վրայ, այդ պատճառով էլ վերջինս չի կարող ոչ մի դէպքում համաձայնել որևէ ցենզի, ինչպիսին էլ լինի այդ: Ընտրողական իրաւունքը պէտք է պատկանի անպատճառ ամբողջ ազգաբնակչութեան առանց որևէ կարողութեան խտրութեան: Ամենաչնչին սահմանափակումը այստեղ կարող է զրկել

տաճան և հարիւր հազարաւոր բանւոր ժողովրդին քաղաքացիական իրաւունքներին: Կորչի ամեն մի ցեղեւ—այս է ժողովրդի իսկական բարեկամների պահանջը:

Բանւորներին համար պակաս վնասակար չէ նաև կրթական ցեղը: Իհարկէ, ցանկանալի է որ բոլոր բնորոշները զբաղէտ լինին և հէնց դրա վրայ էլ պէտք է պետութեան ուշադրութիւնը դարձնել: Եւ ով է ամենից շատ շահագրգռւած ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու մէջ, իհարկ է ինքը—ժողովուրդը: Ունեւոր դասակարգները ընդհակառակն ուզում են որ ժողովուրդը տգէտ լինի, որովհետև այդ տգիտութիւնը հեշտացնում է ժողովրդից վերջին հիւթը ծծելու դործը:

Այժմ մտածեցէք ինչ կը լինի եթէ ընտրութիւնների ժամանակ նշանակւած լինի կրթական ցեղը: Կընտրուին միմիայն կրթւած պատգամաւորներ, իսկ այգալիսիները մեծ մասամբ հարուստներ են, կնշանակէ կրթւածները կկազմեն Ներկայացուցչական ժողովը, որը կառավարելու է երկրի դարձերը և որից ի միջի այլոց կախած է նաև ժողովրդի կրթութեան գործը: Բայց քանի որ նրանց շահերը թոյլ չեն տալիս լայնացնել ազգաբնակչութեան չքաւոր խաւերի քաղաքական իրաւունքները, այդ պատճառով էլ նրանք օգտւելով իրենց իրաւունքից ամեն կերպ կաշխատեն խանդարել ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելուն: Կրթական ցեղն էլ ինչպէս և կալածալիներ, իշխանութիւնը կենտրոնացնում է ունեւոր դասակարգերի ձեռքը: Ուստի դրա դէմ ևս պէտք է վճռականապէս դուռ գալ բանւորութիւնը:

Ուրեմն, ոչ մի սահմանափակում ընտրութիւնների ժամանակ. ոչ կալածալին, ոչ կրթական, ոչ ազգայնական և ոչ դաւանաբանական: Սակայն սրանցով չեն վերջանում բուրժուազիայի փորձերը կրճատելու բանւորներին

քաղաքացիական իրաւունքները: Ունեւոր դասակարգերը բանւորների իրաւունքները կրճատելու մէջ շատ հնարագէտ են: Ընտրողների թիւը կրճատելու ամենատարածւած միջոցներից մէկն էլ տարիքի չափն է, որ իրաւունք է տալիս ընտրելու: Թւում է թէ այն տարիքը որ ընդունւած է իրեն քաղաքացիական չափահասութեան հասակ պէտք է տար չափահասութեան հետ կապւած բոլոր իրաւունքները: Բայց այդպէս չէ:

Ունեւոր դասակարգերը ամբողջ ուժով ձգտում են ընտրողի տարիքը մեծացնել, մինչդեռ բանւորները աշխատում են փոքրացնել: Այսպէս օրինակ Գերմանիայում և Բելգիայում ընտրելու իրաւունքից օգտւում են միայն 25 տարեկանները, Վանիայում 30 տարեկանները և այլն: Սակայն բուրժուազիայի ինչին է պէտք այս բանը, չէ որ այդպիսով պակասում է և իւր չըջանի ընտրողների թիւը: Այո, բայց բանը նրանումն է որ այն ժամանակ երբ իրենց համար այդ թիւը պակասում է միայն մի քանի հարիւրով, ազգաբնակչութեան ստորին խաւերի համար պակասում է մի քանի հարիւր հազարով: Վերջապէս երիտասարդութիւնը աւելի զգալուն է դէպի քաղաքական հարցերը, աւելի եռանդով է ձգտում ամեն մի բարեփոխութեան, վերածնութեան, իսկ այդ ամենից բուրժուազիան չափազանց վախենում է: Ամբողջ աշխարհի բանւորական կուսակցութիւնը (Միջազգային Սոցիալ-դեմոկրատիան) պահանջում է տարիքի փոքրացումը մինչև 18 տարին, որը բաւարար գրաւական է մարդու քաղաքացիական հասունութեանը: Յաճախ հասակի տեղակէտից սահմանափակում են ոչ միայն ընտրողների այլ և ընտրողների իրաւունքը:

Օրինակ Ֆրանսիայում պատգամաւորը 25 տարեկանից պակաս չպէտք է լինի, իսկ սենատորը նոյնիսկ 40 տարեկանից, այնինչ ընտրելու համար բաւարար է համարւում 21 տարին (Ֆրանսիայում ընդհա-

նուր ընտրողական իրաւունք է)։

Այս անում են այն յոյսով, որ հասակն առած մարդը աւելի չափաւոր է լինում և այնքան էլ չի ենթարկւում յեղափոխական տրամադրութեան։

Ոչ մի յեղափոխութիւնից չվախեցող պրոլետարիատը սակայն կուռում է այդ վնասակար ճնշումների դէմ։

Չափահասութեան հասակն առած ամեն մի քաղաքացի-ուհի կարող է ընտրել և ընտրւած լինել ժողովրդի պատգամաւոր, այսպէս է ռամկավարութեան իսկական կողմնակիցների պահանջները։ Յաճախ էլ ազգաբնակչութեան աղքատ խաւերին քաղաքական իրաւունքներից զրկելը կատարւում է քողարկւած, օրինակ Ֆրանսիայում պահանջւում է որ ընտրողը 6 ամիս նախ քան ընտրութիւնները ապրած լինէր միեւնոյն տեղում, իսկ Անգլիայում նոյնիսկ մի տարի։ Ո՛վ է դուրձեալ այս դէպքում վճարուում։ Իհարկ է բանւորութիւնը։ Բանւորներից շատերը ափսոսանք են մի տեղից միւսը տեղափոխել աշխատանք փնտրելու նպատակով։ Այդպիսով նրանք զրկւում են պետութեան գործերին մասնակցելու իրաւունքից, որը սակայն նրանց չի ազատում պետական կարգերին հպատակելու պարտականութիւնից։ Նթէ պետութիւնը մի է, ունի ընդհանուր օրէնքներ, որոնց պիտի հպատակւին քաղաքացիները ուր էլ որ լինեն, միթէ միեւնոյն չէ թէ նոքա ընտրութիւնների ժամանակ որտեղ կգտնւին։

Նրանք կարող են ամեն տեղից ուղարկել իրենց պատգամաւորներին պետութեան գործերին մասնակցելու համար։ Իսկ այդ սահմանափակումները նպատակ ունին զրկելու բացառապէս բանւորներին ընտրողական իրաւունքից, որովհետեւ հարուստը միշտ իւր տունն ու իր մշտական բնակարանն ունի։

Այդպիսի ճնշումների դէմ պէտք է կուեն բանւորները։ Նման սահմանափակումների թւին է պատկանում նաև Այնգլիայի այն օրէնքը, որով հասարակական բարեգործութեամբ ապրողները զրկւում են ձայնի իրաւունքից։ Ներկայ կապիտալիստական կարգերում բանւորներից և ոչ մէկը ապահովւած չէ, այսօր նա աշխատում է, ուրեմն ընտրող է, վաղը նա զրկւում է գործից և ստիպւած է լինում հասարակական բարեգործութեան դիմել, այդ պատճառով էլ նա զրկւում է քաղաքացիական իրաւունքից։ Կարողութիւնը կամ աղքատութիւնը ոչ մի դէպքում պատճառ չպէտք է դառնան քաղաքացուն իր քաղաքական իրաւունքներից զրկելու։

Բոլոր երկրներում բուրժուազիան զօրքերին ժողովրդի ազդեցութիւնից հեռու պահելու համար առանձնացրել է, կտրել է հասարակութիւնից և զրկել քաղաքացիական իրաւունքներից։ Զինւորները, որ դուրս են գալիս ժողովրդի միջից միանգամայն զրկւած են երկրի բախտի վրայ ազդելու հնարաւորութիւնից այնպէս ինչպէս նրանց եղբայրներն ու ընկերները։ Նրանք չեն կարող մասնակցել քաղաքական կուսակցութիւններին, յաճախել ժողովներ, սերտ կապ պահպանել ազգաբնակչութեան հետ իրենց շահերը միասին պաշտպանելու համար։ Բոլոր երկրներին գեմոկրատիայի իսկական պաշտպանները կուռում են այս անարդարութեան դէմ, որով տիրող դասակարգերը զրկել են հարիւր հազարաւոր բանւորներին և գիւղացիութեան ընտրողական իրաւունքից միայն այն պատճառով, որ սրանք զինւորական չորեր են հազել։ Առհասարակ բանւոր դասակարգը հետևում է, որ ընտրութիւնների ժամանակ ընդհանրութեան սկզբունքը գործադրւած լինի ամենայն հետևողականութեամբ։

Բանւորները միակ անշահախնդիր պաշտպանն են ռամկավարութեան, իսկ ռամկավարութիւնը անհրաժեշտ է

ամեն մի սահմանափակում ոչնչացնելու համար:

Գ.

Բացի ընդհանուր ընտրողական իրաւունքից էլ ինչ է հարկաւոր որ ժողովրդական ներկայացուցչութիւնը լինի իսկական ժողովրդական, որ բանւորները կարողանան աշխուրթեամբ պաշտպանել իրենց շահերը տիրող դասակարգերի ոտնձգութիւններից: Բոլոր գեմոկրատական ծրագիրներում ընդհանուր ընտրողական իրաւունք պահանջի կողքին կայ և մի ուրիշ պահանջ՝ հատկապէս իրաւունքի: Այսինքն որ ամեն մի քաղաքացի-ուհի ազգաբնակութեան որ խաւին էլ որ պատկանելի լինի, ընտրութիւնների ժամանակ միայն լի ձայնի իրաւունք ունի և ձայները համազօր նշանակութիւն ունեն: Ինչպէս միջինասորի, այնպէս էլ բանւորի, կապիտալիստ բուրժուայի և պրոլիտարիատի ձայները համազօր են: Այ թէ հարստութիւնը, ծագումը, կրթութիւնն են իրաւունք տալիս պետութեան գործերին մասնակցելու, ալ այն, որ մարդս այդ երկրում է ծնւել և նրա քաղաքացին է հանգիստանում: Ունենոր դասակարգերը միշտ աշխատել են այնպիսի ընտրութիւններ ստեղծել, որտեղ ընտրողը լինէր ոչ թէ անձը, այլ ազնւագարմ ծագումը կամ հարստութիւնը: Ով որ բարոն կամ կոմս է ծնւել նա անպայման իրաւունք ունի օրէնսդրութեան մասնակցելու, այսպէս են ասում արիստոկրատները: Ով հարուստ է, նա էլ պէտք է տնօրինէ երկրի բախտը, ասում են բուրժուաները: Բայց եթէ պէտք է աներիս ժողովրդի պահանջներին զիջումներ անել, լաւ, մենք համաձայն ենք—շարունակում են նրանք միասին, միայն թէ, իհարկէ, մեր ձայնը, կոմսի կամ միլիոնատիրոջ ձայնը չի կարող համեմատուել մի ինչ որ

մրտ ըանւորի ձայնի հետ: Եթէ նա մի ձայնի իրաւունք ունի, մենք պէտք է երկու, երեք և շատ ձայնի իրաւունք ունենանք: Եւ մի քանի երկրներում նրանց աշխուրթ է այդ և բաղմաձայնութեան սկզբունքը պահպանում է նոյնիսկ այժմ այնպիսի համեմատաբար գեմոկրատիկ երկրում ինչպիսին է Բելգիան: Բանւորները ամեն տեղ կուռում են ունենոր դասակարգերի այդպիսի արտօնութիւններին դէմ, այն դասակարգերի, որ ազգաբնակչութեան տմենաչնչին փոքրամասնութեան ձեռքն են տալիս ամբողջ ժողովրդի կառավարութիւնը:

Մի ուրիշ անհաւատարութիւն էլ ձայնատուութեան ժամանակ կայանում է նրանում, որ ազգաբնակչութեան փոքրամասնութեանն այնքան ձայն է տրւում (երբեմն էլ շատ) որքան և ահագին մեծամասնութեան: Օրինակ Աւստրիայում ամբողջ ազգաբնակչութիւնը բաժանւում է կուրիաների (խմբերի) և ամեն մի կուրիա կամ խումբ անկախ միւսից ընտրում է իւր պատգամաւորը: Կուրիական ընտրութիւնների մի փոքրիկ աղիւսեակ:

Կուրիաներ	Ընտրողների թիւը	պատգամա- ւորների թիւը	քանի ընտրողին մի պատգամ, ւոր է ընկնում
1. Խոշոր հողատիրութիւն	5431	85	64
2. Առեւտրական տներ	556	21	26
3. Քաղաքներ	493,804	118	4193
4. Զիւղական հասարակութ.	1,585,466	129	12290
5. Միւս բոլոր ընտրողներ	5,044,222	72	69,563.

Ինչպէս տեսնում էք 26 վաճառական կամ 64 հողատէր ուղարկում են այնքան պատգամաւոր, որքան ուղարկում

են 12.290 գիւղացին կամ ազգաբնակութեան միւս խաւերին պատկանող 69.563 ընտրողներ: Հասկանալի է որ այս կերպ կազմւած ժողովրդական ներկայացուցիչներ բանւոր դասակարգի շահերին չի ծառայում, այստեղ հէնց բացակայում է այն հաւասարութիւնը, որի մասին խօսեցինք: Կայ էլի մի ուրիշ անհաւասարութեան եղանակ, որ մենք նկատում ենք օրինակ Գերմանիայում: Գիւռ 40—42 տարի առաջ Գերմանիան չըջանների էր բաժանւած և տմեն մի չըջան պատգամաւոր էր ուղարկում ըստխտագ (Գերմանական պարլամենտ): Այդ ժամանակի ընթացքում ազգաբնակութիւնը խիստ բազմացել է, այսինքն աւելի հաւաքւել է գործարանական կենտրոններում, այն ժամանակ, երբ գիւղական չըջանները, որտեղ խոշոր հողատերութիւնն է թաղաւորում, համարեա դատարկւել են: Չնայած դրան չըջանները դարձեալ հներն են մնում: Իսկ դրանից առաջ է գալիս այն, որ մի տեղում մի քա, նի հարիւր հազար մարդ մի պատգամաւոր են ընտրում: Իսկ մի ուրիշ տեղ դարձեալ մի պատգամաւոր է ընտրւում 50—60 հազար ազգաբնակութեան կողմից: Գերմանական սոցեալ—դեմոկրատները արդէն վաղուց է կռւում են դրա դէմ. բայց հարուստ դասակարգը խիստ հակառակ է հին սահմանները նոր ընտրողական չըջանների վերածելուն, որովհետեւ այդ դէպքում ըստխտագում սոցեալ—դեմոկրատ պատգամաւորների թիւը շատ կը մեծանայ: Չպէտք է կասկածել, որ գերմանական բաւորները չուտով կը հասնին իրենց պահանջներին, բայց առաժմ նրանք հաւասար ընտրողական իրաւունքով չեն օգտւում քանի որ երկիրը բաժանւած է այդպիսի չըջանների: Ուստի պէտք է պահանջել որ ամեն մի ընտրութեան ժամանակ երկիրը բաժանէր նոր ընտրողական չըջանների և որ այդ դէպքում անպայման ուշադրութեան առնէր չըջանի ազգա-

բնակութեան թիւը և հաւասար թւով ազգաբնակութեան տրւէր հաւասար թւով պատգամաւորներ ուղարկելու իրաւունք: Հաւասարութեան սկզբունքը խախտելու դարձեալ մի քողարկւած միջոց: Ազգաբնակութեան պատգամաւորական ժողովի կողքին բուրժուազեան շատ երկիրներում աշխատել է ստեղծել մի այլ հիմնարկութիւն, մի այլ պարլամենտ, կամ ինչպէս ընդունւած է կոչել Բարձրագոյն պալատ: Այդ բարձրագոյն պալատները, որ մի քանի երկրներում սենատ են կոչւում (մեզանում նախկին Պետական Խորհուրդը Ծ.Թ.) կազմւում են ժառանգական նշանաւոր արիստոկրատներից կամ թագաւորից նշանակւած մարդկանցից պաշտօնեաներից կամ խոշոր հողատէրերից: Ուրիշ տեղերում, օրինակ Ֆրանսիայում, սենատը բաղկացած է տեղական ինքնավարութեան հաստատութիւնների ներկայացուցիչներից, որ մեծ մասամբ ունեւոր դասակարգերի ձեռքում են գտնւում: Այս երկրորդ պալատները կազմւել են յատկապէս ժողովրդական ներկայացուցիչները անձահարելու նպատակով, մանաւանդ այն ժամանակ, երբ վերջինը կամենում է ընդունել այնպիսի օրէնքներ, որ հակառակ են տիրող դասակարգերի շահերին: Բանւորական կուսակցութիւնը վճռականապէս պահանջում է այդ երկրորդ պալատների ոչնչացումը առաջադրելով իւր դրօշակի վրայ մի պալատեան սկզբունքը: Երկրորդ պալատի գոյութիւնը խիստ դանդաղում է ժողովրդական ներկայացուցիչական գործունէութիւնը, ամաւանդ այն օրէնքներն ընդունելիս, որ պաշտպանելու հն ժողովրդի շահերը: Ժողովրդի իսկական բարեկանները չեն կարող կանգնել երկպալատեան սխտեմի վրայ, ով նրա կողմնակից է նա բարժուայի ձեռքին խաղալիք է:

Ընտրողական իրաւունքը ընդհանուր և հաւասար լինելուց բացի, պէտք է լինի նաև ուղղակի: Այդ նշանակում է, որ ժողովուրդը անմիջապէս է պատգամաւոր ողարկում զարրամենտ և ոչ թէ նախ ընտրում է ներկայացուցիչներ, որոնք միայն պատգամաւորներ են ընտրում: Ազգաբնակիւթիւնը պէտք է անպայման իմանայ թէ ում է յանձնում իր շահերի պաշտպանութիւնը, ում ձեռքն է տալիս օրէնքներ հրատարակելու իշխանութիւնը: Բոլոր այն երկիրներում, որտեղ պետական կարգերը իսկապէս դեմոկրատական են, այսինքն, որտեղ երկրի կառավարութիւնը փաստօրէն ժողովրդի ձեռքն է, արդէն վաղուց է ընդունւած ուղղակի ընտրութիւնը: Ունենոր դասակարգերը միշտ երկաստիճան կամ եռաստիճան ընտրութիւններ են պաշտպանում, որովհետև զիտեն, ներկայացուցիւթեան այդպիսի կազմակերպութեան դէպքում հեշտութեամբ կարելի կը լինի իրենց ցանկացած մարդկանց անցկացնել: Այն որ միխոնաւոր ժողովրդին չի կարելի կաշառել, ձնչէր, մանաւանդ երբ նա գիտակից է, իսկ մի հարիւր ընտրածն ի միշտ էլ հեշտ է իր ձեռքն հաւաքել, կաշառելով կամ մի ուրիշ անարդար միջոցով: Բազմաթիւ դէպքերում երբ ընտրութիւնները անուղղակի են, անցնում են այնպիսի թիկնածուներ, որոնք ժողովրդի կամքը լսկի էլ չեն արտայայտում: Ընտրութիւնները ուղղակի պէտք է լինեն, որովհետև միայն այդ դէպքում ամեն մի ընտրող կիմանայ թէ ում է պատգամաւոր ընտրում, կամ ումից կարող է հաշիւ պահանջել: Միայն այսպիսի ընտրութիւնները կարող են հետաքրքրել ժողովրդին հետևելու ինչպէս պատգամաւորների ընտրութեան, նոյնպէս և նրանց աջող գործունէութեան, մինչդեռ անուղղակի ընտրութիւնների դէպքում նա չի հետաքրքրում պարլամենտի կազմով, որին ինքն է ընտրել: Ուղղակի ընտրու-

թիւնների պահանջը նոյնքան կարեւոր է պրոքետարիատի համար, որքան և ընդհանուր և հաւասար ձայնաւութեան պահանջը:

Այժմ տեսնենք թէ ինչպէս պէտք է անցնին ընտրութիւնները, որ ամեն մի քաղաքացի ինչ դասակարգի էլ որ պատկանելիս լինի ազատ կարողանայ օգտուել իր այդ իրաւունքից: Հասկանալի է որ կառաւարութեան, կամ որիէ կողմնակի անձանց մուտքը, ձնչում գործ դնելը ընտրութիւնների ժամանակ թոյլատրելի չէ: Ամեն մէկը ազատ ընտրում է նրան, ում ցանկանում է: Բայց ինչպէս է նա ընտրում, քացարձակ բոլորի առաջ թէ գաղտնի: Թւում է թէ ընտրութիւնները պէտք է քացարձակ կատարւեն, որովհետև ոչ մի ոճիւր կամ յանցանք չկայ իր քաղաքացիական իրաւունքներից օգտուելու մէջ: Բայց երբ գործը մօտիկից ենք դիտում, բոլորովին այլ բան է ըստացում: Այն որ ազգաբնակութեան խոշոր մեծամասնութիւնը (բանւորներն և աղքատ գիւղացութիւնը) ներկայ պայմանների շնորհիւ կատարելով կախում ունին գործարանատերոջից կամ կալաւածատէրից: Մանաւանդ երբ բանւորները վատ են կազմակերպւած և զիտակից չեն կապիտալիստը նրանց հետ կարող է անել այն ամենը, ինչ որ ինքն է ուզում: Սնթաղրենք որ ընտրութիւնները մօտենում են: Կապիտալիստը (կամ հողատէրը միևնոյն է) կանչում է իր մօտ բանւորներին և յայտնում է, որ ինքը ցանկանում է որ բանւորները այսինչ թեկնածուին ձայն տան և հասկացնում է, որ հակառակ դէպքում անհագանդների հետ կը վարւի իր ուղածի պէս: Սնթաղրենք որ նա ըստ օրէնքի այդպիսի իրաւունք անգամ չունի: Բայց նա մի այլ իրաւունք ունի, կապիտալի իրաւունքը իրեն դուր չեկող բանւորին փողոց շարտելու իրաւունքը:

Ինչ պիտի անի բանւորը ընտրութիւնների ժամանակ: Իհարկէ եթէ նա զիտակից և կազմակերպւած է երբէք չի ենթարկւել կապիտալիստի պահանջներին և իր մարդուն կը ընտրէ: Բայց չէ որ այդպիսիները դեռևս

չառ քիչ են (հակառակ դէպքում մեզանում բոլորովին ուրիշ կարգեր կը լինէին): Հասկանալի է որ մեծամասնութիւնը ենթարկւում է կապիտալիստի պահանջներին, որպէսզի առանց մի կտոր հացի չը մնայ, և ընտրւում է նըրան ում կը հրամայէ կապիտալիստը: Այսպիսի պայմաններում խօսք անգամ չի կարող լինել ազատ և բոլորի համար հաւասար ընտրութիւնների մասին: Բոլորովին ուրիշ բան է զաղտնի ձայնատուութեան դէպքում: Այստեղ ոչ ոք չը գիտէ ում է տալիս արգեօք այս կամ այն բաները իր ձայնը: Նա մտնում է ընտրողական սենեակը և ներքակ ծրարով ցած է թողնում իր կարծիքը արկղի մէջ: Լաւ կազմակերպած ընտրութիւնների դէպքում գաղտնիքը հսկւում է շատ խիստ և կապիտալիստը անգոր շարութեամբ պէտք է իր շրթունքները կրծոտէ երբ իր ներկայացուցիչը կը սեանայ, իսկ ընտրւած կը լինի բանւորների բարեկամը: Ընտրութիւններին հսկելու է ժողովրդից, կամ աւելի լաւ է զանազան քաղաքական կուսակցութիւններից կազմւած առանձին յանձնաժողովը: Սրբեմն այնպիսի դատարկ բանը, ինչպիսին է ծրարների գոյնը, կարող է ահագին ազդեցութիւն ունենալ ձայնատուութեան գաղտնիքի վրայ: Ծրարների և բոլոր թերթերը պէտք է միատեսակ կազմւած լինին յատուկ մշակւած ձևով:

Անփոփելով մեր բոլոր պահանջները, որոնց գոհացում են տալու լաւ կազմակերպւած ընտրութիւնները, մենք տեսնում ենք, որ այն ընտրութիւնները կարող են պաշտպանել ժողովրդի ստորին խաւերի շահերը, որ կազմւում են ընդհանուր եւ հաւասար ընտրողական իրաւունքի սկզբունքով ուղղակի եւ զաղտնի ձայնատուութեամբ: Ով այսպիսի ընտրութիւնների կողմնակից չէ նա անպայման ժողովրդի թշնամին է, նա, որքան էլ գեղեցիկ խօսքերով հանդէս չը գայ, կամենում է իշխանութիւնը բուրժուայի ձեռքը թողնել: Այս հարցում ոչ մի զիջում չի կարող լինել: Բանւոր դասակարգը իր արեւնով է շահագրգռւած արդարապէսները իրականացնելուն, որովհետեւ զրկւած չի իր իրաւունքներից և ձեռք բերելու քաղաքական իշխանութիւնը, որը անհրաժեշտ է իր քաղաքական ծրագրերի իրագործման համար:



Լոյս ևն տեսել՝

№ 1. Արշալոյսի երգեր Գ. ՀԱՅԿՈՒՆԻ ԳԻՆԸ է 25 Կ.

№ 2. Ինչպիսի ընտր. իրաւունք է հարկաւոր
բանւոր դատակարգին—Բ. ԴՆՈՒՆԵՄՆՅ. —15 Կ.

Տպագրուած ևն՝

№ 3. Դատակարգը Դատակարգի գէտ —ՄԱՐՏՈՎԻ

№ 4. Կորչին Սօցեալ—Իւմոկրատները —ԲՐԱԿԷԻ

ԳԻՆՆ Է—15 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0220442

35.652